

որ անձրև ստանալու համար կատարուե-
լիք կրօնական զոհերը փոխանակ Փու-Յի
մանուկ ինքնակալին, Ելուան-Շի-Քարի
ծեր կայսրը կատարէ:

Քրգմն. Հ. Մ. Թ. ՌԷՆԱԹՕ ՍԻՄՈՆԻ

GIUSEPPE PITRÉ

ԵՒ

« FOLK - LORE »

Յովսէփ Քիրզէ իրաւամբ հիմնադիր կը
կոչուի ժողովրդոց հոգեբանութեան հե-
տազօտութեանց, ոչ միայն իտալիոյ մէջ,
այլ նաև բովանդակ Եւրոպիոյ մէջ: Կնա-
ի Բալիբոյ 1842 Դեկտ. 23ին և հոն
վախճանեցաւ 74 տարեկան պատկանելի
հասակին մէջ Ապրիլի 12ին (1916): Կն-
բակուտի անդամ և Սուուեչչայտա Համալ-
սարանի, աշխարհահամբա՛ իւր հանճա-
րեղ ուսումնասիրութեամբը, ունեցաւ ար-
ժանաւոր թաղում մը, որ իւր փառաց
գագաթնակէտն եղաւ: Իւր ուսումնասէրի
ծանր կեանքին մէջ զուարթ ճառագայթ
մը սփռեց կատակերգական դէպք մը:

Յովսէփ Քիրզէ, 1866-67ի ժանտա-
մահի սրածութեան միջոց, իբրև բժիշկ
անձնանուէր խնամք տարած էր բոլոր
այս ահաւոր հիւանդութեամբ վարակեալ-
ներուն, և արժանացած էր յատուկ մե-
տալի՛ իբրև « արդիւնաւոր հասարակաց
առողջութեան»: Սակայն միայն բժշկու-
թեան մէջ չէր որ մետալի արժանացած
էր: Քիրզէ իւր կոչումը կը զգար ուսմանց
մէջ և կը փափաքէր հասարակաց վարժա-
րաններու մէջ դասախօսութեան ասպա-
րէզը մտնել: Վերջապէս կրցաւ Բալիբ-
ոյի նախակրթարանի ստորին դասերուն
ուսուցչութեան խեղճուկ ամբոս մը գրաւ-
ել: սակայն քիչ վերջ, է՛նչ հանդիպի...
այդ պաշտօնը ստաւ ձեռքէն, իբրև անոր
«անկարող» համարելով զինքը, այն մի
և նոյն Պետական վարչութիւնը, որ իրեն

ասպետի շքանշան խաչ դրկած էր՝ ուս-
մանց մէջ իր վաստակած յատուկ արժա-
նեաց համար:...

Քիրզէ աղքատ էր: Նաւաստոյ մը որ-
դի, հայրը Նոր-Օռլէանի մէջ գեղին շքեմէ
մեռած ըլլալով, Բալիբոյի մէջ խեղճու-
թեամբ կ'ապրէր իր մօրը հետ, զոր կը
պաշտէր: Շարունակեց իւր բժշկութիւնը
կատարել, սիրալիք խնամք տանելով մա-
նաւորապէս աղքատներու, և միանգամայն
զանոնք խնամած պահուն, անոնց խեղ-
ճուկ հիւղակներու մէջ կը հետազօտէր Սի-
կիլիոյ հին աւանդութիւնները, հին սովո-
րութիւնները և ժողովրդական երգերը,
որոնք արդիութեան հոսանքներէ դեռ ա-
նազարտ մնացած էին:

1862ին երեք բանախօսութիւններ հրա-
տարակեց առակներու վրայ: 1868ին հրա-
տարակուցաւ իր առաջին ցննական ու-
սումնասիրութիւնը «Սիկիլիոյ ժողովրդա-
կան երգերու վրայ»: Յաջորդ տարին
հրատարակեց «Օրբանդոյի Երկրին ժողո-
վրդական երգերը Սիկիլիոյ ժողովրդա-
կան երգերուն հետ համեմատուած»: Այն
ատենէն ի վեր սկսաւ առատահոս վազել
իր Սիկիլիոյ folk-loreի ուսումնասիրու-
թեանց հոսանքը, զորս կաթիլ առ կաթիլ
ժողոված էր, ամբողջ իւր կենաց ընթաց-
քին մէջ, ուսումնասէր գիտնականի համ-
բերատար ճշտութեամբ և կղզեցոյ կրօնա-
կան սիրով ու նախանձայուզութեամբ,
ջանալով (ինչպէս շատ հիշտ կ'ըսէ M.
Zingarelli Giornale d'Italiaյի մէջ)
իւր հայրենիք Սիկիլիոյ քաղաքակրթու-
թեան պատմութիւնը դասաւորել աշխար-
հիս պատմութեան մեծ հոսանքներու հետ:

Մինակը չէր, և ոչ ալ առաջինը, այս
ձեռնարկին մէջ: Արդէն ուրիշ Սիկիլիացի
մը, Leonardo Vigo, Աչիբէալէն, բա-
նաստեղծ, հնագէտ և պատմաբան, ծնած
1779ին, ժողովածոյ մը կազմած էր «Սի-
կիլիոյ ժողովրդական երգեր» ու, որոնք
գեղեցիկ հիւսուածք և ստեղծագործութիւնք
են այն ժողովրդեան, որ՝ Քիրզէի յետին հե-
տազօտութեանց համեմատ (Թէպէտ վերջ-
նական ալ չըլլան թերևս) ստեղծեց նաև

այն սրտագորով ճերթութիւնը որ Գասի-
նիի պարոնուսին կը կոչուի (Baronessa
di Carini): Պատմութիւնն է դժբաղդ
հարսի մը զոր հայրը կը սպաննէ: Այն-
քան սրտայոյզ է և ցաւագին, որ անոր
հետ կարելի է միայն Տանդէի Ֆրանչես-
գան և Կէօթէի Ֆրաուսին Մարկերիդան
համեմատել: այս վերջինս ալ հիմնուած
է ժողովրդական աւանդութեանց վրայ,
որոնք յաճախ աղբիւրն են մտածկոտ հան-
ճարներու գլուխ-գործոցներու:

Գերմանիան, երբ բոլորովին հիմա-
կուան հակառակ, մեծ էր գաղափարնե-
րով և փոքր՝ զէնքերով, զարթոյց ընդ-
հանուր ամէն կողմ ժողովրդական աւան-
դութեանց պաշտօնն ու հետազոտութիւնը:
Քանաստեղծ մը, Գրիստոնէութեան իմաս-
տասէրը, մարդկային զգացմանց փիլիսո-
փայն, որ այսօր թերևս Գերմանիոյ մէջ
տարօրինակ մէկը պիտի համարուէր, հըռ-
տակաւորն Հերտէր, 1778էն ի վեր հրա-
տարակեց իրեն համբաւաւոր գիրքը, Ժո-
ղովուրդներու ձայներ (Stimmen der Völ-
ker), որուն մէջ թարգմանած և ամփո-
փած էր ամէն ժամանակաց ժողովրդական
երգերը: իրեն գաղափարով, միակ զե-
րագանց բանաստեղծութիւնը ժողովրդա-
կան բանաստեղծութիւնն է, որովհետեւ
այս է միայն զուտ մարդկային և անկեղծ
զգացումը պարունակող: իրմէ վերջ, կարգ
կարգ յաջորդեցին իւրաւու գերմանական
բանակներ՝ ժողովրդական երգեր, աւան-
դութիւններ, առասպելներ ժողովող ուսում-
նասէրներու: Ամենաբայալուն սպայակոյ-
տը պատիւ ունէր իր մէջ ունենալու եր-
կու կրիմ եղբայրները, և Ուելանդ ամի-
նագնի ճերթողը: Լուտուիկ Դիք ժողո-
վրդական աւանդութեան և բարեպաշտ
հաւատքին մէջ կը փնտուէր «տղայոց յա-
տուկ ուղղադատ զգացումը» որ աւագան
մը պիտի ըլլար վերստին զովացնելու
մարդկութիւնը, որ արիւնայեց կը թա-
փուէր բռնակալաց բռնակալին, Նարո-
լէոնի պատահաւ: Երկու բարեկամներն
ալ՝ Առնիմ և Պրենդանոյ, իրենք ալ կ'ըն-
կըղմէին առասպելներու կապուտակ ալեաց

մէջ, և անտի կ'ելլային իրենց հետ բե-
րելով տրամներու, վէպերու և ճերթու-
թեանց մարգարիտները, մինչդեռ Շիւլէր
կը սիրահարուէր մեր Գաուլոյ կոծծիի
թատերական առասպելներուն և անոնցմէ
բազելով կը ստեղծէր իր Turandotը:
Մինչդեռ մարդկային գաղափարներու գեր-
մանացի մեծ ճերթողն, իւր Գերմանիոյ
վզին կը կախէր վննետկեան մարգարիտ-
ներու այդ ճառամանեակը, Անզդիա, բուն
օրօրանը folk-lore բարեբաղդ բառին,
կը շարունակէր զովասանել Մարգիբըս-
նը, որ զինքը շլացուցած էր խեղաթիւ-
րելով Սկովտական լիբանց բնակիչներու
երգերը, որոնք Ոստիան անունով մէկու
մը կ'ընծայուէին: Խտալիոյ մէջ սակայն
հին folk-loreի զարմանալի հրաշք մը
կը ծագէր: 1815ին, տասնութօթը տարե-
կան պատանեակ մը, Ճիագոմոյ Լէորար-
տի, կը շարադրէր գիրք մը, «Ճաշակ նախ-
նեաց ժողովրդական սխալներու» (Sag-
gio sopra gli errori popolari degli
antichi) անունով, որուն վրայ կը զմայ-
լէր Սէնդ - Պէօլ, և իրմէ աւելի ալ կը
սքանչանան այժմեան գիտնականք:

Որովհետեւ զբազիտութեան մէջ անցած
էր այլ ևս արքայական զղամիդներու ժա-
մանակը և Մանտոնի իր անմահ գլուխ
գործոց երկասիրութեան զլիաւոր դերա-
կատարներու պատուոյն կ'ամբառնար եր-
կու գիւղացիներ, ժողովուրդը յաղթական
կը բարձրանար նաև զբանաստեղծութեան և
գեղարուեստի մէջ:

Պէտք չէ մոռնալ որ Բիդդէէն առաջ,
որ այնքան մեծ արդիւնք ունեցաւ, հա-
մետ մարքեցի մը, Օրէսդէ Մարքուալիի,
Ֆայրիանոյէն, 1855ին շնորոյցի մէջ
կը հրատարակէր «Ումպրեան, Լիգու-
րեան, Բիչենեան, Բիէմոնդեան և Լատին
ժողովրդական անտիպ երգեր» (Canti
popolari inediti umbri, liguri, pi-
ceni, piemontesi, latini) զորս ինքը
ժողոված ու լուսարանած էր: Նաև թու-
մագէտոյ որուն հոգին բովանդակ դէպի ժո-
ղովուրդը սեւեռած էր, պաշտեց ժողովը-
դեան երգերը և զանոնք հաւաքեց: Գոս-

դանդինոյ Նիկրա, Գալուսի աշակերտը, բրարիոններու արժանացաւ նաև իւր Բիէ-մոնդեան «ժողովրդական երգեր»ով (Canti popolari): Այս ասպարէզի մէջ միշտ վարժապետ մնաց նաև Ալէսանտրոյ տ'Անգոնա: Իտալիոյ մէջ հռչակաւոր եղան նոյնպէս Տալ Մէտրիոյ, Պեոննի, Տէ Նիկոյ, Տէլֆինոյ Օոսի, Տէ կուպեանադիս և այլք, որոնց շարքը շատ երկայն է, և Բիդրէն անոնց ամենուն դասապետը կը համարուի: Իրեն կը պարտին իտալական մատենագրութիւնը և ընդհանուր ազգագրութեան ուսումնասիրութիւնը անսպառելի զանձ մը «Մատենադարան Սիկիլիան» աւանդութեանց» (Biblioteca delle tradizioni siciliane) հրատարակութիւնը, քսանհինգ հատորներէ բաղկացած: Նա էր որ հիմնեց 1880ին «Դիւան ժողովրդական աւանդութեանց» (Archivio per le tradizioni popolari) պարբերական հրատարակութիւնը, որ զօրադարձաբար տպարանին սնանկանալովը դադրեցաւ, յետ երեսուն տարի փալուսն շրջան մը բոլորելու, 1910ին Սակայն Բիդրէին ամենամեծ արդիւնքը հաւաքումներ ընելու մէջ չէր, ուրիշ շատեր իր նման հաւաքած էին ժողովրդական՝ երգերն ու աւանդութիւնները, այլ իրեն միայն սեպհական է ամենէն առաջ այդ երգերու և աւանդութեանց մէջ զանազան ժողովրդոց, և մի և նոյն ժողովրդեան՝ զանազան ժամանակի շրջաններու մէջ, ունեցած հոգին ըմբռնելը: Ժողովրդական հոգեբանութեան ուսումնասիրութիւն և հետազոտութիւն մ'եղաւ իւր պարապմունքը և ոչ թէ սոսկ ազգագրական հաւաքում մը: Այլոց ըրածը լոկ աստղծ պատրաստել էր, իսկ ինքը այդ հաւաքուած նիւթերով յօրինեց ճարտարահիւս կոթողը՝ ազգերու հոգոյ ըզգացմանց, և զձեց անոնց անկեղծ ցոլացմանց պատկերը, իւրբանջիւրին ներքին ալուց մէջ թափանցելով և զանոնք համատեղելով մտարու հետ. այս համեմատութեանն առաջ եկաւ իւրբանջիւր ժողովրդին թագաբարկութեան և զարգացման ճշգրիտ ծանօթութիւնը:

Բիդրէի երկրորդ մեծագոյն արդիւնքն է նաև Սիկիլիոյ Ազգագրական Թանգարանը, Բալերմոյի մէջ, զոր գրեթէ միայնակ հիմնեց ու ճոխացուց իր անխնջ հետազոտութիւններով և մանր պրպտումներով: Այսօր ազգագրական թանգարաններու մէջ այդ կը գրաւէ առաջնակարգի դիրք մը:

Աւելորդ է մի առ մի համբել իւր հնդինակութիւնքը. բոլոր իւր կենաց մէջ մինչև իւր վերջին օրերը, մանաւանդ վերջին տարիներու մէջ, բազմաթիւ ձախողութեանց ներքև ճնշուած, միշտ յարատեւ և անխնջ համբերատար աշխատող մ'եղաւ այս ոսկեղէն մարդը: Երբ մարդ իւր տունն երթար, կրօնական պատկառանք ու յարգութիւն մը կը զգար տեանելով այն ծերունին որ կարծես չէր յիշեր բնակատարած այնքան բազմաթիւ և թանկագին երկասիրութիւնքը, և գրեթէ միշտ նոր երկասիրութիւն մ'ալ սկսելու վրայ էր:

Մեսսինայի աղետալից երկրաշարժին մէջ կորսնցուց իւր ամենասիրելի մէկ դուստրը: Այն օրուանէ ի վեր Բիդրէի սիրտը անդարմանելի ցաւով մը խոցուեցաւ և զինքը մեղմով մահուան դուռն հասուց:

Հ. Յ. ԱՒԳԵՐ

ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Տոքթ. Նօէլ Բադոն, Կլազգովի համալսարանի քնախօսութեան ուսուցչապետը Chamber's Journalի մարտի (1916) պրակին մէջ կը գրէ, որ սնունդն է որ կը ներկայացնէ մեր աշխատելու կարողութեան միակ աղբիւրը: — Ասոր համար զիջ փաստ մը կու տայ դիտելու անհատ մը որ ենթարկուած է երկար անստաղութեան, Կը յիշուին շատ զէպքեր անձերու՝ որոնք որ և է կերակրէ զգու-